Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2021թ. հուլիսի 21-23-ը Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Նարեկ Տերյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2021թ. հուլիսի 21-23-ը

4. Հրավիրող կողմը՝

ՌԴ այցը նախաձեռնվել է հայկական կողմից

5. Գործուղման նպատակը՝

Հայաստանում «SPUTNIK V» ռուսական պատվաստանյութի շշալցման գործընթացի պատշաճ կազմակերպում

6. Քննարկված թեմաները՝

- «Sputnik V» պատվաստանյութի սուբստանցիայի՝ Հայաստանում ասեպտիկ շշալցման և տեխնոլոգիական տրանսֆերի գործընթացների ապահովմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների և փուլային միջոցառումների կազմակերպման հետ կապված հարցերի քննարկում
- ռուսական կողմի հետ արևային էլեկտրակայանի կառուցման նախագծի իրականացման հնարավորությունների քննարկում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի շրջանակներում կազմակերպվել է հանդիպում Ն.Ֆ. Գամալեայի անվան համաճարակաբանության և մանրէաբանության ազգային հետազոտական կենտրոնի (Կենտրոն) տնօրեն Ալեքսանդր Գինցբուրգի և Կենտրոնի «Մեդամալ» մասնաճյուղի տնօրեն Նատալյա Ֆիլիպովայի հետ:

Հանդիպման ժամանակ քննարկվել են «Sputnik V» պատվաստանյութի սուբստանցիայի ասեպտիկ շշալցման համար հայկական կողմից ներկայացված լաբորատորիայի անհրաժեշտ սարքավորումներով հագեցվածության, դրա արտադրական հզորությունների, պատրաստի դեղային տեսակի արտադրության հետագա փուլերի կազմակերպման, ինչպես նաև պատրաստի արտադրանքի պահեստավորման համար անհրաժեշտ ռեժիմի պահպանման հետ կապված հարցերը:

Կողմերն անդրադարձել են նաև երկբաղադրիչ պատվաստանյութի տեսակով պայմանավորված արտադրական գործընթացի ապահովման համար պարտադիր անվտանգության կանոնների կիրառման, ինչպես նաև հոսքագծերի մաքրման համար ռեագենտների օգտագործման հետ կապված գործընթացներին:

Արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն «Sputnik V» պատվաստանյութի պատրաստի դեղային տեսակի՝ Հայաստանում արտադրության փորձնական մեկնարկի կազմակերպման, ինչպես նաև տեխնոլոգիական տրանսֆերի գործընթացի շրջանակներում անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստման, և Ն. Ֆ. Գամալեայի անվան համաճարակաբանության և մանրէաբանության ազգային հետազոտական կենտրոնի կողմից՝ ՀՀ-ում արտադրված փորձնական սուբստանցիայի համապատասխանության գնահատման դրական արդյունքի դեպքում, հիմնական արտադրական գործընթացի պատշաճ կազմակերպման հարցերի շուրջ:

Այցի ընթացքում կայացել է նաև հանդիպում Ռուսաստանի ուղղակի ներդրումների հիմնադրամի տնօրեն Վլադիմիր Սվինցովի հետ, որի ժամանակ քննարկվել են պատվաստանյութի շշալցման գործընթացի կազմակերպման և ՀՀ առաքման ֆինանսական պայմանները:

«Գեներիում» դեղագործական ընկերության գործադիր տնօրեն Դմիտրի Կուդլայի հետ հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել պատվաստանյութի փորձնական խմբաքանակի՝ ՀՀ առաքման և շշլացման գործընթացների կազմակերպման հստակ ժամկետների մասին:

Հայաստանում «Sputnik V» պատվաստանյութի սուբստանցիայի ասեպտիկ շշալցման արտադրության կազմակերպման համար ռուսական կողմից սուբստանցիայի տրամադրման և անհրաժեշտ փուլային գործընթացների հաջող ավարտից հետո հնարավոր կլինի այդ պատվաստանյութի քաղաքացիական շրջանառությունը Հայաստանի Հանրապետության տարածքում:

Կազմակերպվել է նաև հանդիպում՝ ռուսական կողմից Ընկերությունների խումբ «Խեվել»-ի գլխավոր տնօրենի տեղեկալ պետական կառավարման մարմինների հետ փոխգործակցության և միջազգային համագործակցության գծով Եվգենիա Բորեսկովայի, «Կոմպլեկսպրոմ» ԲԸ-ի ճյուղային ուղղությունների դեպարտամենտի տնօրեն Դմիտրի Պրուդովի և «Unigreen Energy» ՍՊԸ-ի տնօրեն Օլեգ Շուտկինի մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվել է ՊՄՀ համագործակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության տարածքում՝ էներգիայի կուտակման և պահպանման համակարգերով հագեցած արևային էլեկտրակայանի կառուցման նախագծի իրականացման հնարավոր ձևաչափը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել բանակցությունները՝ ծրագրի իրականացման ուղղությամբ փոխգործակցության մեխանիզմները հստակեցնելու և գործնական իրագործման փուլին անցնելու նպատակով:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

7/30/2021

X

ԱՐՏՅՈՄԻ ՆԱՐԵԿ

Signed by: TERYAN NAREK 2103870832

28.07.2021թ.